ՎԵԼԻԾԵՆ պատմեց թէ բանտին մէջ ի՞նչ պէս կարդալ ու գրել Եր սորված . և անոնց ցուցընկըու համար նստաւ ու Հաղեսորական գործքերէն քիչ մը կարդաց : Կարդալու ատեն ան բանն հանդիսվեցաւ որ կ'ըսէ , թէ « Ամէն փրկութեան համստղնեղը » անոր համար փրկութեան համեր են՝ վասն « զի աղօմք են ըսեր . ու անոնք որ դասակարտուած են , անոր համար դատապարտումեր են՝ վասն զի աղօմք չեն ըսեր » : Ինքն ալ աս խօսքերը մեկնելով ըստաւ . « Լսեցիք , պէտք է աղօմքը ընել , աղօմքը ընել , թէ որ փրկութեան համսիլ կ'ուղենք : Ազօմքըով Աստուծմէ ամէն բան կ'ընդունինք : Աս գիրքը շատ աղեկ զիլք է . կը փափաքէի որ ամէնքնիդ ալ մէկ մէկ հատ ունենայիք » :

ՎԵԼԻԾԵՆ աս խօսքերս որ ըմբցուց , դատառը օդնական քահանայն մէկ զի քաշեց ու հարցուց որ թէ որ կ'ուղէ ալ դուրս ելան : Հրամեր ես , բատ քահանայն : ՎԵԼԻԾԵՆ ու աղգականայը խմացուցին , ըսկով թէ

վարդարանիր ըսկըու ու Աղոքմեսա ինձ Առ
տուած երգերու ատեննն եկեր էր : Ֆելիչէն
աղաչեց՝ որ հրամանն տան, որ անոնք աղ
մէկ տեղ ընեն աղօմքը : Փափաքը կատա-
րեցին : Սեղանին աջ դիմ ամէնքը մէկ տեղ
խումբ մը եղած ծնկան վրայ եկան : Ֆելի-
չէն ու օգնական քահանայն դիմացը, եր-
կու զինուոր աղ ետեր : Աս ջերմենուանդու-
թենէս ետե՝ հայրը շիշարժեցաւ, ծնկան
վրայ մնաց, ու ձեռուըները իրարու կոլո-
ցած՝ քառորդի մը շափ կեցեր լուռ աղօմք
կ'ընէր : Նշրոր ոտք ելաւ, Ֆելիչէն հօրմէն
ու մէկարնց ամէնէն աղ թողութիւն խըն-
դրեց իր տուած գայթակղութեանց ու նե-
ղութեանցը համար . աղաչեց հօրը որ որիշ
ազ զականներուն աղ իր կողմանէ բարե ընէ-
ու մասնաւորապէս մօրը . ու ամէնուն աղ
զատ զատ մէկ մէկ քիչ բան ըստաւ : Աշոքք
սլաղտուեցաւ հօրը, եղբօրը ու քեռայրին
չես . հօրը առջև ծնկան վրայ եկաւ՝ ու
խնդրեց որ զինքը օրհնէ, ան աղ օրհնեց՝
ձեռքով վրան խաչ հանելով . բայց ցաւն
ու արցունքը թող շենի խոար որ բերնէն
բառ մը հանէ :

Աս այցելութենէն ետե, որովհետեւ ա-

տենու ուշ էր, եկաւ բանտապան մը աղաւ
շեց որ ըսէ թէ իրիկուան ի՞նչ կերակուր
կ'ուզէ: Ըստ թէ աւելի կ'ուզէ բան չու-
տել. վասն զի եղանակաց ծովին ուրբաթն
էր, միանգամայն իր մահուան հսկումն էր:
Բայց օդնական քահանայն հրաման չի-
տուաւ որ բոլորութին ծոմ կենաց, և յոր-
դորեց որ քիչ մը բան ուտէ: Փելիշէն
մէկէն հնաղանդեցաւ հըութեամք, բայց
միայն հայ ու չոր ուզեց, ուրիշ բան
չուզեց:

Կերակրէն եսքը իր զգեստները կասկոյ
մը ըրած բերին: Ենոնցմէ որոնք որ իրեն
յարմար երեցաւ՝ որ երկրորդ օրը կընայ
հագնիլ՝ առաւ, ու բանտապաններուն ա-
ղաջեց՝ որ մնացածը աղքատներուն տան:

Եսքը զրիչն առաւ որ քանի մը բան զրէ.
ինչպէս որ մէկ քանի հոգի իրեն յանձն
արարութիւն էին ըրեր. և կ'ուզէին որ իր-
մէն յիշատակ մը ունենան: Խախունի մը
համար աս յիշելիքը զրեց.

« Ես իրատը կու տամամնուն, որ աւե-
» լի քաղցր ուրախութիւնը որ հոգին կլր-
» նայ զգալ Եստուած սիրեին է, ու ամե-
» նասուրը Եսայրը իրեն պաշտպան բռնել,

» Հաստատուն հաւատք ու յոյս ունենալ
» ու կառարեալ սէր » : (1)

Ետքը ուրիշներուն համար ուրիշ թող
թի վրայ գրեց .

« Աղջոյն ձեզ Յիսուս ու Ամարիամ, որ
» խմյոյս էք . ջերմեռանդ հոգի, սիրէ Յիս
» սուս ու Ամարիամ, և շիմոննաս երբէք
» քեզ յանձնելու Յիսուսի ու Ամարիա-
» մու » : (2)

Ուրիշ թողթի մը վրայ ալ .

(1) Questo è l'avviso, che io ghe dago a tutti, che la più bella contentezza, che può trovare un'anima è amare Dio, e tenere la madre SS. per sua avvocata e star con ferma Fede, con ferma Speranza, e perfetta Carità.

(2) Viva Gesu e Maria che siete speranza mia anima divota amante Gesu e Maria e non tralasa mai di raccomandarti a gesu e maria.

« Աղջոյն ձեզ Յիսոս ու Մարիամ,
» սիրտս ու հոգիս ձեզի կու տամ» :

Ֆելիչ Առարտէ : (4)

Եթ բաներս պրելու ատեն յանկարծ դա-
դրեցաւ ու օգնական քահանային դարձաւ
ու ըստ . « Եւելի լս չե՞ր ըլլար որ աս ետ-
» քի վայրկեաններս խնձի համար աղօմք
» ընէի , քան թէ սորիշներուն համար կե-
» նամ բան պրեմ » :

« Քահանային պատասխան տուաւ . « Ֆե-
» լիչ , ըրէ ինչ որ Եստուած քեզի կ'ազ-
» դէ , թէ որ աղօմք ընելու փափաք կըդ-
» գաս , զրելէն լս է աղօմք ընելը » :

Եթ խորհուրդին հաւանելով , զրիչը մէ-
կէն թուզուց , ու եաքը և ոչ վանկ մը գրեց ,
ու մինչեւ պատկելու ատենը կեցաւ աղօմք
ըստ : Բայց տամնը մէկէն առաջ չխպակե-
ցաւ : Տամնը մէկին աղաչեց որ զինքը պա-
կելու խուցը տանին . հոն ալ քիչ մը տ-

(4) Viva Gesu e Maria vi do il cuor e
lanina Mia.

Felice Rebol.

լովմք ըրուաւ, ու խաչելութիւնը ու իր սլքը
բերուան պատկերները պատճնելով՝ շուտ մը
քունը տարաւ . որ առանց ընդհատելու
հանդարտ մինչև երկրորդ օրուան ժամը
չորս քշեց :

Ծաէպէտ և իրեն արիութեանը ու հան-
դարտութեանը նայելով պատճառ չիկար
տարակուսելու թէ արդեօք գիշերը հան-
գիստ կ'անցընել, բայց օդնական քահա-
նայք խոչեմութիւն սեպեցին որ գիշերը ի-
րեն պահպանութիւն ընեն : Գիշերուան առ-
ջի մասը Առւրբ Մարկոսի երեցը Անձելոց
Մանդովանի քահանայն կեցաւ . մնացած
մասը օդնական քահանայն : Աւստի երրոր
Ֆէլիչէն արթքնցաւ, օդնական քահանայն
մատրան մէջ իրեն կը սպասէր : Հազիւ որ
ներս մտաւ, վախով ու հոգով մէկէն հար-
ցուց թէ գիշերն ի՞նչպէս անցուց : Ֆէլիչէն
սիրտը հանդարտեցուց երբ ըստաւ՝ թէ կե-
նացը մէջ այնալիսի հանգիստ գիշեր չէր
անցուցած : Քահանայն հարցուց՝ թէ սիր-
տը ի՞նչպէսէ, արթնցածին պէս միաբը ի՞նչ
մնածութիւն էր եկեր : Պատասխան տուաւ
թէ ոչ երբէք աւելի տրախ ու դուարի՛
որտով անկուղին ելած էր . ու արթնցածին

սրբ Աստուծոյ շնորհակալ եղաւ՝ որ միքանակ չապէս ծագեց ան օրը որ իր կենաց զահը սիփտի ընէ :

Այս խօսքերէն ետքը, սեղանին առջե ծնկան վրայ եկաւ, ինչպէս որ սովորութիւն էր ըրեր, և շատ ջերմեռանդութիւնը իր առաւօտեան աղօժքներն ըրաւ : Հինգին մօտ Աւագերէցն եկաւ, ու ինքն ուղիոյ սրա տարագ ընել, ու իր ձեռքուիր ետքի սրբութիւնը տալ իրրեւ թոշակ մահուան . և շատ ջերմեռանդութիւնը ու ուշախութեանի հաղորդուեցաւ : Վամիջապէս ետքը օդնու կան քահանայն ալ սրատարագ ըրաւ . Այէ միջէն ծնկան վրայ՝ ան սրատարագն ալ տեսաւ . ու հաղորդութեան շնորհակալութիւնն ըրաւ, որ սրատարագէն ետքն ալ դեռ քշից : Եափաճաշկի իրեն չկրուաթ բերին, ու Կի պրոսի զինի : Բայց նորէն աղաչեց ինքը որ թաղ տան որ ծոմ սրաչէ, բակով թէ առողջ ու ուժով է ու կարօտութիւն չունի, և թէ մահն որ քիչ ատենէն վրայ պիտի գար չէ թէ միայն զինքը չիկոտիիր, հապա զինքը շատ կը միսիթարէ, ու կ'արիացնէ : Այս իրաւ եր . վան զի Աւագերէցը սպանուելու երթապէն քիչ մը ու

ուաջ երակլը նայեցաւ ու տեսաւ որ ամենելին կանոնաւոր ու հանգիստ էր:

Օգնական քահանայն կէս մը կամքը կատարեց, կէս մ'ալ ոտխալեց, որ գոնի, չի քրամթը խմի: Եւ աս բանս ուժով հրամելուն պատճառն ան էր որ Փեղչէլին չէ թէ միայն ժուժկալութեան առաքինութիւնը, հասկա մնունդն ալ հարկաւոր էր, այն սուրբ և բարձր դիտմանն համար որ ունէր: Եւ աս բանսապահնէ մը խմայուեցաւ, որ ան ետքի երկիք օրերուն մէկը սիրտ տալու ատեն որ բան ուտէ, վասն զի չէր ու զիր ուտել, աս ըստ Փեղչէլին: « Յաէ որ » գիտնայի թէ աւելի ուտելուլ աւելի չար » չարանդ կը քաշեմ, շատ սիրով կ'ու » տէի »: Աս խօսքով կ'ուզէր ըսել, թէ որ յուսար որ աղէկ մնունդ առնելով, կրոնայ մահուան տանջանքը աւելի սաստիկ ու աւելի երկան խմանալ, ծոմին լաւ կը սեպէր ուտեն ու խմելը:

Ժամը ուժին երրորդ պատարագ մ'ալ եղաւ, որ Փեղչէլին համար ետքի պատարագն էր: Աս միջոցին քանի մը քահանայք լիսայ երան, որ կ'ուզէին մահուան երթակու ատեն չետին երթալ. ասոնց մէջն

Էր Աւագերէցն ալ : Աւագերէցը՝ աչաւոք
ժամբ մօտեցած ըլսալով՝ այլայլեալ սրտով
Փէլիչէին ըսաւ, որ հաւատոյ խոսառվա-
նութիւն ընէ, որպէս զի ետքի արձակում
մ'ալ առնէ, որ ծայրագոյն քահանայապե-
տը յանուն Հիառւսի կու տայ հաւատացե-
լոյ մեռնելու ատեննին : Որվեցուց թէ աս
արձակման առջի ազդեցութիւնն է մեր մե-
ղացը սպատիմնելուն կատարեալ քառու-
թիւնը : Փէլիչէն դեստինը ծնկան փրայ եկաւ,
և միաքը ամփոփ մտիկ կ'ընէր եկեղեցական
արվթիներն որ այսպիսի ատեն կը կարդան,
ու ան ետքի օրհնութիւնն ալ առաւ . ըստ
արարութեանը ուր որ պէտք էր ինքն ալ
քահանայից հետ սպատասխան կու տար :
Ետքը դեռ ինքը ծնկան փրայ մնաց, ու մեծ
ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր, ու ա-
տեն ատեն եռանդագին աշուշները երկինք
կը դարձընէր : Տեմնուեցաւ որ Ատուած
մանաւոր կերպով հետը միացեր էր, ու
Փէլիչէն կարծես որ ինքիրմէ ելի՞ր վերացեր
էր, ու չէր իմանար թէ չորս դին ինչ կ'ը-
լայ : Քահանայ մը քոթք զնաց չեմ դիսեր
ինչ ըսելու համար, ու յանձնելու որ իրեն
համար աղօթք ընէ : Փէլիչէն խոնարհու-

Ճեամբ աղաւցեց որ ան միջոցին զինքը լժուցու որ ինքն իրեն վրայ հոգ ունենայ , ու մանաւանդ թէ ինքն ալ արթմքով օգնական ըլլայ իրեն , որ չըլլայ թէ անսպուղ անցընէ իր ետքի վայրկեանները , ու խոստացաւ որ երբոր հոգին ամէն վտանգէ ապահով ըլլայ , ինքն ալ իրեն համար սովորմք կ'ընէ : Աս բանա ամէնքն ալ իմանալով թէ ինչպէս կը փափաքի որ միտքը Աստուծոյ հետ մնայ , ու թէ ինչպէս սրտին մէջ ամէն վարժապետէ լսաւ աներեւոյթ վարժապետ մը կար , թու զուցին զինքը հանողարտ որ աղօմք ընէ ու ինքիրենը կարդայ , մինչև որ նշան տուին որ ճամբայ ելլուի :

Ան նշանը առաւօտեան ժամբ իննին ատեններն էր որ ատեանին ոստիկանը տուաւ : Ան նշանը հոն եղած քահանայից բոլորին սիրտը շարժեց ու սոսկայուց : Աւագերեցը շատիկը հագած միղը մանուշակաղոյն ու բար մը , ձախ ձեռքը խաչ , զլուխը խաչ գտակը , Փէլիչէն մօտեցաւ . աջ ձեռքով ձախ թեւէն բռնեց , ու սրտին փղձուկը բռունելով ուժով մը բաւ . « Փէլիչէ , յանուն » Հիսուսի մեռնելու եկո » : Փէլիչէն իրքի ուրախալի լուր մը լած ըլլար , աղօմքը

կտրեց, առանց վախի վեր ցալելեց, և երկան երկաթին ծանրութիւնը կը կրէր, որովհետեւ բանտապանը ծայրը քարէն աղատեց ու ձեռքը տուաւ. և անանկով մատուեն զուրա ելաւ : « Եթ Ճամբէ՛ մը անցնելու ատենը տեսաւ որ իր ընկերը պատուհանին երկաթին պլլուած կը նայ' ը, որովհետեւ ետքի շորս առիսը Փեղիչէն բանտին ան կողմն էր կեցեր, որ պատուհանները ան Ճամբուն մրան կը նայէին : « Եօյն վայրկեանը իրարու ըսին . « Երթաս բարով, Փեղիչէ : Անաս բարով, Լաւանտրոյ » . բայց մէկը կու լար, մէկալը զուարթ էր : « Լնձի Համար աղօթքը ըրէ » :

« Կտնն ալ երբոր արքայութիւն երթաս » լնձի Համար ըրէ » :

« Ճրամեր ես, մի տարակտւսիր. մնաս » բարով » :

Ճրամբուն վրայ որ ելաւ, դահիճը դէմն ելաւ . բառաստէն տարուան կար . միջահասակ բայց ուժով ու լիցուն . երեսը դեղնագոյն, աչուրները սպափիկ ու կապտագոյն . մաղերը, երեսին վրայ մօրուքը ու պեխերը թաւ ու սևագոյն . զյուխը սրածայր զլիարկ մը, դադղիայի Հասարակապիուականներու

զլսարկին նման . մախրագոյն չուխայ հազած , զինուորի պէս կուրծքը զոց . անդ բակարտիքը դեղնագոյն քառակուսի դծերով , ոտքը կօշիկ . մէջքը ճերմակ կաշիկ դօտի , անկեց ալ ձախակողմի սուր մը կախած . պատեանը սև կաշի սղնաձով զարդարած : Ան վայրկեանը մեղասկարտը արդարութենի . դահճին ձեռքը յանձնուեցաւ . Ուստի բանտապանը Փէլիչէին ութէն շրջման համերու ատենիր , դահճինը ձեռուըները ուժով մը բռնից , ու մատուցները իւրաբու անցրնելով ձեռուըները միացոց , աչքին առջեը բարակ չուանի կծիք մը քակեց ու անով բաղուկները ամուգ մը կասեց : Ամենքը աշուլնին Փէլիչէին վրայ էին տնկեր , որ տեսնան թէ աս ահաւոր պարագաները սիրաը կը խռովի՞ն թէ չէ : Խակինքը ոչ դահճին և ոչ ուրիշ մէկու մը նայեցաւ . հապա ջերմեանդութեամբ և զուարթութեամբ մէկ մը խաչելութեան վրայ կը նայէր , մէկ մ' ալ երկինք . որ առջի օքը , ու նայն առաւօտք կանուխ անձրեւոտ ու ամնոտ էր , ան ատենիր բայցուեցաւ լուսաւորուեցաւ , որ իր տեսքովը այն երանելի չողին միսիթարէ : Այսան երբոր խմացաւ .

որ ոտքին շղթան հանեցին ու ոտքը ազատեցաւ, ու շղթային շղթլոցը լսեց, ետերդ դարձաւ, ու հոգ ընկերով մին ըստ :

« Ո՞ւր է խմ շղթաս . կ'ուզեմ որ չխտա» բած՝ պաղնեմ մեկ մին » :

Բայց չիկրցան իրեն աս փափաքը կատարել . վասն զի բանտառայանը դասեր էր հոն չէր . քահանայից մեկը ըստ որ չուանը պազնէ , որով որ բազուկները կասդած էին : Խնկն ալ քանի մը անգամ՝ փափաքանոք սկագաւ . ձեռքն ալ խաչելութիւն մը տուին՝ երեսը իրեն դարձած ու վարդարան մը : Ան ցաւալի տեսարանը չխտենալու . համար առջեւ ուրիշ արգելք մը չլդրին , ինչու որ սուխրաբար ուրիշ դատապարտելոց առջեւ կը դնեն . վասն զի Ռելիչէն այսպիսի բանի կարօտութիւն չուներ :

Դահիճը մեջքը նորէն չուանով պլից ու ետևէն կապեց , ու իր ծառային ձեռքը տուաւ , որ սպախուցի պէս բռնէ : Ան ատեն նշան տուին , որ ան աղևտալից թափորը քալել սկսի : Առջեւէն էին (Օգնական սուրբ Վատուածածնի եղբայրները իրենց յատուկ զգեստովք . Ճերմակ շապիկ մը ու դօսիով կապած , կոնակն ալ ու սղբուիկ

վիրարկու մը . սուզի ու մահուան յարմար
նշան : Առջե էն իրենց մէկը խաչը ձեռքը ,
մէկալոնիք բաղմութեամբ ետե էն կ' երթային ,
ծանր ձայնով վարդարան ըսելով : Ետքը զի-
նուորներու երկու կարգ . ամէն մէկ կարգը
քառասունի չափ . անոնց մէջն ալ ուրիշ
երկու կարգ հեծեալ հետեակ զինուորնե-
րու : Ասոնց մէջն եր յանցաւորը , քովը
Վագերէցը , օգնական քահանայն , երկու
եղայրներ , ու ուրիշ չորս քահանայք , որ
ջերմուամութեան համար մահապարտին
հետը կ' երթային , վասն զի վրան սէր էին
կապեր : Ետևէն առջե էն աջ ու ձախ դիէն
և ամէն պատուհաններէ անհուն բաղմու-
թին մը ժողովրդեան թէ տեղայի թէ օտա-
րական տեսնելու կեցած , Բայց ոչ այնչափ
թիւրաւոր բաղմութիւնն որ բոլորը աջուրնին
վրան էին անկեր , ոչ աղաղակը , ոչ շվամթու-
թիւնը և ոչ խոռոչութիւնը Փեղչէն կրցան
զբաղեցրնել կամ այլայիլ . կարծես որ աշ-
խարհքիտ համար ոչ աչք ունէր , ոչ ա-
կանջ : Խափը բուղութիւնն ինքիրեն ամփոփած
և սուրբ հաւատքին լուսովը ու միսիթարու-
թեամբը լցուած , աչքը կամ երկինիք միայն
կը վերցրնէր , որուն որ կը փափաքէր ,

կամ իւացնլութեանը, որուն միայ էք հաստատած բոլոր իր յոցը։ Աւիշը բան չէր երևագր թէ կը լսէ, բայց սն համառօտ աղօթքներն որ քահանայք ատեն ատեն զինքը քաջալերելու համար, կամ մեղքերէն աւելի զգուելու համար կամ հաւատքը զօրանաբու ու Առուծութոյ սէրը բորբոքելու համար կ'ըսէին։ Այս համառօտ աղօթքները ինքն ալ նորէն կ'ըսէր բայց այնավիախ սիրով ու հառաջանքով, որով յայտնի կ'երևար թէ, ան աղօթքները ինչպէս խորունկէն կը հասկընար ու ինչպէս համը կ'առնէր։

Դամբան որ քիչ մը առաջ դացին, քահանայ մը աւելի ինքը զինքը միսիթարելու համար բան թէ զանիկայ խմանալու համար հարցուց թէ այնչափ սկասրաստութեան ու բազմութեան մէջը սիրտը ինչպէս է։ Փելիչէն վերանալէն արթըննալու պէս, դարձաւ և ուրախ ու զուարժ սկասախան տուաւ։ « Հայր սուրբ, շատ աղէլ եմ, ոչ » լիս և ոչ այլայլութիւն կը դգամ։ մա » նաւանդ թէ արխութիւն և ուրախու » թիւն։ Աւելին իրան սարաննուելու կ'եր » թամ։ Ա ախեմ թէ չէ. Ա ախեմ որ » զիս սպաննել չիտան»։ Աս սկասախանը

այնալիսի պարզմութեամբ մը զուրցեց , որ
Աւագերէցը ու օդնական քահանայն շիկրը¹
ցան զիրենք բռնել , ու իրենք ալ ժատեցան ,
թէպէտ այնալիսի պարագայի մէջ խնտայն
անկարեղի բան էր :

Կէս ժամու մը չափ ճամբայ ընելէն եռև
սուրբ Գէորգայ եկեղեցւոյն առջեկ զաւի
թը հասան . որ ընդարձակ , շխտակ ու քա
ռակուսի տեղ մ' է , չորս դիէն սպառ
քաշած , միայն հիւսիսային կողմը արձակ .
ան կողմնն ալ աւագուտ շխտակ վեր ելած
ըն մը . վրան որթեր տնկած , ծայրն ալ հ
կեղեցի մը , սուրբ Գէորգին անուամբը :

Աս լեռանը տակէն քիչ մը հեռու ծայ
րը սուր ու լաւ չլյոկած գերան մը կարտքն
կուած , որուն արևելքան երեսին վրայ
բարձր դամ մը գամուած էր . տակէն ալ
տանդուխ մը , քանի մը աստիճանաւ կ'ել
լուէր եռոտանի սեղանատախտակի մը վրայ ,
որուն վրայ որ մահապարտը պիտի կենար
մինչեւ որ կախաղանին բաները յարմարցը
նեն . եաքը դահիճն որ նշան տար ան պա
տուանդանը ոտքին տակէն պիտի վերցը
նէն՝ որ չուանէն կախուած մնայ : Գերա
նին քովը բարձր շնէք մը որ դահիճը անկէ
իր շործողոթիւնները ընէ :

Ան ցաւալից բաղմութիւնն որ կախաղաւ նին տեղը հասաւ, դինուորները չափաւոր հետաւորութեամբ կախաղանին չորս դին շարուեցան քառակուսի ձեռվ, և պատճեց մը եղան բազմութեան, որ ան ցաւաղին տեսարանիր տեմնելու համար չորս դիէն հոն է, ին վաղիր . բազմութիւնիր դաւթին մէջը շխզմերւն՝ բոլոր հոն համնելու ընդարձակ ճամբուն վրայ ալ լիցուեր է, ին, ու ամիկի թէատրոնի ալէս ալ իրարու վրայ նուտեր է, ին պատին չորս դին :

Դաստիճը վրայի վերաբերմն ու սուրբ հանեց, և բաճկոնուլը միայն մահապարտին քով գնայ. մարմնոյն չորս կողմէննորէն չուանով սլլեց ու կասկեց . ուղեց որ վրայի զգետուն փողպատը ծալէ, բայց չեղաւ. ուստի մեծ դանակ մը հանեց, ու անով ետեի կորմէն ձղքեց որ միզը բացուի : Աս աչուելի գործքն որ տեմնողները սոսկումէն ու դութին սարսափեցան, չիկրցաւ քնաւ այլայլել Պիւ լիչէն, որ պէտք էր մսածեր, թէ դաչչին ձեռուըներն էին որ վզին կը դալէին ու փող պատը կը կտրէին : Հոս ամէն ատենի՛ եւել Ճշմարտեցաւ ան խօսքն որ ինքն իրեն համար բաեր էր . թէ « Ես զառ մը դարձայ, ու

» սլեաք է. որ Աստուծոյ արդարութեանկ
» զոհ ը լլամ՝ » :

Դահձին աս ամէն Խորի Երկիխալալի գոր
ծողութեանց ատենիր ինքը Հանողարտ ու
Հեղ կեցած էր: Ո՞իշտ աչքը դէպ 'ի զե-
տինը. Հեղ մը միայն վիրցուց որ Խորի
անդամ խաչելութիւնը տեսնայ ու պագնէ.
որ քիչ մը Խոր դահձը ձեռքէն առաւ ու
օդնական քահանային ձեռքը տուաւ: Կար-
ծէս որ աս զրկումն Խեղջ Գիշեցէին շատ
դժարն եկաւ, և աս սրտաշարժ դանդասն
ըրաւ. « Խաչելութիւնն ալ ձեռքէս կ'առ
» նին » : Աւագերէցը զինքը մխիթարելու
Համար իր ձեռքի խաչելութիւնը պագնել
տուաւ. օդնական քահանային ալ ըստ որ
խաչելութիւնը սիրտը սպահէ, ձեռքն ալ
սուրբ Աստուածածնայ լարդարանն ունի:
Աւ Հետր չխօսեցան. վասն զի դահձը
չուանը վիզը ձգեց, ու խստութեամբ հրա-
մեց որ Հետր կախաղանն ելլայ. մէկէն Գիշ-
եցէն հնաղանդեցաւ, և կտմայուկ ձայնով
Հիսուս Արքիամ ըսելով վեր ելաւ. և ա-
ռանց վախի ինքիրենը պատուանդանին վր-
րայ գնաց:

Կարելի է ոմանկը յոյս ունեցած ը լլամն:

որ այսավիտ սուբբ արիութիւն ունեցող ե-
րիտասարդ մը այնպիտի յարմար առիթ ու-
նենալով ազդու կերպով խօսելու իր այն
չափ եղարցը , որոնց մեծ մասը փղձկմամբ
ու յարդութեամբ մտին կ'ընէլն , ամենուն
շնութեանը համար բան մը բաէք : Քայլ
ինձի իր լութիւնը աւելի զարմանալի կու
գայ , որ խօսած ըլլար նէ այնչափ զարմա-
նալի չէք իդար : Ետքի օրերը շատ ան-
դամ իր քահանայիցը հարցուց՝ թէ յար-
մար կը սեպէ՞ն որ ինքը կախաղանէն բան
մը խօսի : Առջի բերան իրեն անանկ կ'երե-
ւար որ Աստուծոյ վառացը ու եղարցը շի-
նութեանը համար կը վայէք որ խօսի . և
ոչ քահանայք բոլորովին չէ բախն իրեն :

Քայլ ինքը աս բանիս վկայ Աստուծոյ
առջեւ մտածելով նայեցաւ որ իր հոգւոյն
կընայ մեասակար ըլլալ . վախցաւ որ չըլլաց
թէ համարձակութեամբն ու եռանդեամբը
սրով սլիտի խօսեք , յորդորուի ժողովուք
դը վեճքը դոմիլ , և վասիուկ մտածու-
թեամբ խոնարհութեան մեասակար սե-
պեց . ինչպէս որ մահուան վճրոն ալ իրեն
կարգացուելէն ետեւ՝ որիշ բան չքրա-
բայց միայն աս պատասխան տուաւ , թէ-

Աստուծոյ սիրոյն համար, ու իր մնջացը
ապաշխարանաց տեղ յօժարութեամբ կ'ըն-
դունի վճիռը :

Ան ատենէն տարակուսի մէջ էր, որ
արդեօք մահուան կախաղանէն բան մը խօ-
սի թէ չէ, և շատ անգամ քահանացից կ'ը-
սէր, թէ ինչպէս որ Աստուծ ան վայր-
կեանին աղղէ, անանկ կ'ընէ : Աւատի ես
կարծեմ որ ան դիսուածին իր լութիւնը
յաղթութիւն մ'էր որով խոնարհութիւնը
յաղթեց իր նախանձաւորութեանը : Բայց
գործքէն եւել աւելի աղղու ու աւելի պարզ
որ խօսքը կրնայ ըլլալ : Ամենքը տեսան
իրեն ջերմեռանոր կերպը, իրեն քաղցր խա-
ղաղութիւնը և անխոռով արիութիւնը, ո-
րով որ համբերեց այն վասանուն ու տա-
կալի մահուանը զորն որ վարադուրով մը
դոյել կ'ուզեմ. վասն զի սիրոս չիդիմանար
որ ստորագրենմ թէ դահիճը ինչպէս վայ-
ընութեամբ չուանին գործողութեանը օկ-
նեց . թէ պէտե իրաւ ան տեղը դուցէ աւելի
գոլութեան արժանի էր այն վայրադ ան-
գլութիւնը քան թէ զթութիւնը :

Այն կարձ միջոյն որ սպանութիւնը
կատարուեցաւ, քահանացը կախաղանին

սոսկը ծնկան վրայ եկած ան աղօթքները լւրին, որոնցմասվ որ եկեղեցին հառատացելոց մեռնելու ժամանակը հոգինին Ամոռուծոյ կը յանձնել:

« Հազիւ թէ այն ապաշխարող հոգին եւ ըեցաւ թէ ելաւ մարմինէն զօր խիստ մահը այնչափ չեր տղեղացաւցեր, որ չերևնային գեռ վրան այն բարեպաշտ ու արի հոգւոյն նշաններն որ կենդանութեան ատենը ունէր, մէկէն Աւագերէցը սահնդուխին վրայ ելաւ, որ կախաղանէն հեռացուցեր եին, շապիկ հաղած և ուրարը վիզը ինչտէս որ եր, աջ ձեռքը խաչելութիւնն որ Աւելի չէին ձեռքն եր, բարձր ձայնով մը կանչեց դէպ՝ ի ժողովուրդը որ սոսկացած, այլայլած լուռ կեցեր եր.

« Խ՞նչ օգուտ է ձեզի որ եկաք աս խեղճ» շարագործին սարանուիլու տեսաք, թէ որ աս տեղէն, ով ժողովուրդ, խրատ առած կամ զղջացած դառնալու շըլլաք: — Քաւագին ու սոսկալի համար մը ձեզի տրուեցաւ: Աս քսանուիլիկը տարուան աշխոյժ երիտասարդը քիչ մը առաջ ուժով. հիմա տեսէք, լաւ նայեցէք, աշոքնիդ դարձուցէք իրեն ուռած

» ու տիսուր մարմնոյն վրայ որ կախած
» կեցեր է . ձեր հետաքրքրութիւնը կատա .
» բեցէք : — Հայոց դուք ձեզի գալով որ
» մտածէք ի՞նչ կը սորմիք : — Աս կախա .
» դանին վրայ չէք մի կարդար Աստուծոյ
» Տին վՃիռը , որ մեղքը մահ կը բերէ : —
» Համանուկ է . մեղքն ու մահը եղաղք են .
» ով որ մեղք ունի կենաց արժանի չէ : —
» Եւ սակայն այս սարանածը մինակ չէ ,
» ով սիրելի եղաղք , որ Աստուծոյ օրէնքը
» ոտքի տակ առած ըլլայ : Ամէն մէկերնիդ
» թող իրեն խղճմտանիքը քննէ , ու ինքն .
» իրեն պատասխան տայ թէ արդեօք մա .
» Հուան արժանի չէ : Ուշ որ մարդկային
» արդարութիւնը ասիկայ պատժեց , աս .
» տուածային արդարութեան սուբը միա .
» կերոյ կախուած կեցած է անոնց ամե .
» նուն զիսուն վրայ միայն , որ Աստուծոյ
» սիրելի չեն , և չիկայ մէկը որ անոր սու .
» կալի բերնուն ազատ մնայ » :

« Աս խեղճ՝ երխուասարդը դոնէ զղջացեր
» էք . բոնական մահը զարմանալի հապ .
» տակութեամբ Աստուծոյ կամացը ընդու .
» նեցաւ . ինքը աս մահը կեանիքէն լաւ սե .
» պեց . ու երբոր իր յանցաւոր ըլլալը չեին

» կիրաքի հաստատել, ինքը իր բերնովով իր
» զլսաւոր յանցանքները խոստովաննեցաւ
» դատաւորներուն, որ կ'ուզէին զինքը ա
» զատ ընել, ըսելով թէ Խոջմանքը կը
» ստիպէ զինքը ատ խոստովանութիւնը
» ընել, որ իր ներսէն կ'աղաղակէր՝ թէ
» պէտք է արդարութիւնը տեղն երժայ .
» իր խօսքը հաստատեց զարմանալի ա
» պաշխարութեամբ անցընելով բանտին
» օրերը, և այն Վտուածը որ վիշտն ալ,
» մըխիթարութիւնն ալ ինքն է տուողը ,
» պարգևեց իրեն կենդանի հտատք, որ
» կախաղանէն երկինք փոխադրուի Հիսու
» սի արդեամբը, զորն որ շատ անդամ կը
» փափաքէր ընդունել սուրբ հաղորդու
» թեամբ : Դուք ալ տեսաք թէ ինչ ա
» բիութեամբ իր կախուելու չուանը սրա
» գառ, ու աս ցաւադին տանդուխներէն
» վեր եղաւ, դուք ալ տեսաք ան եռանդն
» որով որ մինչև ետքի շումնը անդադար
» աղօթք կ'ընէր, տեսաք որ աչուըները ար
» ցունք չիմար . այլ միակերպ խաչին վրայ
» էին կամ երկինքը ուր որ ընկրմած ըլա
» լով կարծես թէ չէր խմանար կամ չէր
» զդար ինչ որ իրեն կ'ընէին : Այիթէ դու

» ղաց . երեսին դոյնը վտխուեցաւ : Կ'եւ
» ըևնար որ իր յաւկտենական ու աշաւոր
» դատաւորը , որ այնչափ իրեն մօտեցեր էր ,
» այն զդաստացեալ հոգւոյն սիրտ կուտար
» քաւութեան մեծ դործքը կատարելու , իր
» Փրկչին արդեանսը անտարակուսելի յու .
» սովը զինքը լեցընելով : — Դառք , ո՞ւ Աս
» տուծոյ սլատուիրանքը ծածուկ ոտքի
» տակ առնողներ , որ խստացեալ սրտիւ
» իրաւցնէ չարագործ էք և ուրախու
» թեամբ ժամանակնիդ կ'անցընէք , ու
» մարդկային արդարութենէ վախ չոմնիք
» դուք : Ո՞վ դժբախտներ , թէպէտ և ձեր
» անկողնին վրայ կը մեռնիք , բայց անով
» ձեր մահը կախուածին մահէն լաւ կընայ
» սեպուիլ : Աս վատահամբաւելցն հոգին ,
» արբայութեան մէջ միշտ պիտի կենդանի
» մնայ . իսկ ձերը թէ որ դարձի դալու
» չըլլաք , յաւիտեան պիտի մեռնի դժոխւ
» քին մէջ » :

« Ա՞ի ըսէք , թէ դեռ ասոր պէս չարա
» դործութիներ չենք ըրեր : Ա՞էկ մահուչափ
» մեղքը միայն չէ թէ ժամանակաւոր , հա
» սլայտիտենական մահուան է արժանի :
» Բայց չիկարծէք թէ այս ողորմելի երիւ

» տասարդը , որուն մեռելը դեռ տաք տաք
» ձեր աչքին դիմացն է , մեկէն հասաւ այն
» սոսկալի չարագործութեանցը ծայրը , որ
» զինքը մահուան արժանի ըրին . մի՛ կար
» ծէք թէ առաջ տեղի մանր յանցանքներ
» շէք ըներ : « Խմբախտ երխտասարդը , ո՞ գիւ
» տէ , կարելի է որ առջի բելանը սիրելի
» ու աղէկ տուայ մ'է եղեր . գուցէ պղտիկ
» սխալմամք մը սկսեր է , ու անկէց մեծի
» մը անցեր է . շար ընկերներ , անառակու^ւ
» թեան առիթներ , դինեառններ , երխտա
» սարդական ցոփութիւններ , շուայտու^ւ
» թիւն , չարագործութի , զինքը մոլորցու^ւ
» ցեր են . աչա , ով անառակ երխտասարդ
» ներ , ձեր բոնած ճամբան ալ նոյն է ,
» դուք ալ մեծաքայլ առաջ կ'երթաք նոյն
» ճամբուն վրայ , որ ասիկայ ողբալով ու
» գանելով ընցուց : « Չեր ընկերոջը վրայ ,
» ձեր նմանւոյն վրայ զձեղ տեսէք . ու ետ
» քը , թէ որ կը համիք , դեռ նոյն ճամ
» բով իր ետևէն գացէք . և քիչ ատենէն
» դոք ալ կը համնիք վախճանի մը , որ
» իրենէն քիչ ցաւալի շըլար : Արդարու^ւ
» թեան ձեռքը կ'իյնաք , վատանունութեան
» կը վարժիք , բանտերու կը սորվիք , ձեր

» տհաս օրերն ալ վատահամբաւ կախա-
» ղան մը կը լմնցընէ : Ծմէ որ արդա-
» րութեան ձեռքէն ալ խալուիք, ձեզի շատ
» աւելի գեշ . գուցէ նշան կ'ըլլայ թէ
» Աստուած բոլորտին զձեղ երեսէ ձգեր
» է . ու ձեր կախաղանը առժամանակեայ
» պիտի չըլլայ , ինչպէս որ աս ասլաշխա-
» րող երիտասարդինը , հասլայաւիտնա-
» կան ո :

« Ո՞վ հարք , ո՞վ մարք , հիմակ ձեզի
» կը դառնամ , և կ'աղաջնմ զձեղ՝ որ աս
» տիւրագին օրինակէն սորովիք , թէ որչափ
» մնասակար է դաւակներնիւ դաստիա-
» րակելու անփոյթ ըլլալը . զանոնք չար
» օրինակէ , անդպամ ընկերներէ , մեղաց
» առիմներէ չխահաչելը : Ո՞իով բանիւ կտ-
» թին հետ Աստուծոյ դատաստանին իւ-
» խը իրենց մաքին մէջ չտպաւորելը . որ ա-
» նով իրենց երիտասարդական կիրքերը
» սահման ու չափաւորեն : Ո՞ի կարծէք
» թէ աս արդարութեան սլաշտնեայն դա-
» հիճը մահապաթաց ճշմարիտ սպանողն
» է : Կատ անդպամ բուն ծնովքն են ան-
» զութ դահիճները այնչափ խեղճ զաւ-
» կրնելու , որ կեանքերնին կախաղանը կը

» լմնայրնեն : Ինչու կը վախնաք աս անմեղ
» մարդէն որ օրէնքը կը կատարե՞՝ ու դուք
» ձեզմի, ինչու չեք սոսկար : Անհոգ կամ
» անզգամ հայրեղն ու մայրերը որ իրենց
» զաւկրները անզգամութեան ճամբան կը
» դնեն, իրենք պէտք էին կատարել աս
» սոսկալի դործն որ դաշիճը կը կատարե .
» կախելու չուանը իրենց աւելի կը վայլ .
» քան թէ իրենց դող ու աւաղակ զաւկը .
» ներուն, որ արդարութեան ձեռքով կը
» կախուին : Գէշ դաստիարակութեամբ
» այնչափ դատապարտելոց վատանուն մա .
» հուանը իրենք պատճառ կ'ըլան : Աւելի
» շատերուն ալ որ չեն դատապարտուիր,
» իրենք կը բանեն դժոխքին դոները : Ուր
» որ այսպիսի ծնօղք ու զաւկրներ իրար
» պիտի դտնեն կատաղութեամբ ու յու .
» սահատութեամբ : Ուրեմն կ'աղաղակէ .
» ձեզի աս մահուան կախաղանը, ամենուդ
» կ'աղաղակէ յանուն Վտուուծոյ . ով մե .
» դաւորք, խելուընիդ գլուխնիդ ժողվիցէք,
» աս առիթն որ աստուածային ողորմու .
» թիւնը ձեզի տուաւ, սարասլը չանցընէք .
» թող հայրը, թող մայրը իր զաւակը վրր .
» կել մտածէ . թող ամէն մարդ ինք դինք

» իրկել մտածէ . երխուսարսլք , ծերք ,
» կուրծքելնիդ . ծեծելով տուն դարձիք , ու
» ասլաշխարութիւն ըրէք : Այս կախուածը
» ձեղի աս յիշասակը մողոց . բանտէն
» աս քարոզեց ամենուն , որ վիճքը տես-
» նալու գնացին . մտիկ ըրէք իրեն . դրը-
» սուանց յանցաւորի ու մեղաւորի կերպա-
» բանիքով ինքը ներսուանց արդար էր , ինչ-
» պէս որ մեղի յօյս կուտայ իր այնչափ եր-
» կիւղածութեան զգացմունքները , իրեն
» այնալիսի սքանչելի ասլաշխարութիւնը ,
» սուըր խորհուրդները ջերմեռանդութեամբ
» ընդունելը , ու յաւալից մահը ուրախու-
» թեամբ յանձն առնուլը , որ ամէնը զար-
» մացուց արդարութեան սուըր սիրովը » :
Բարձրաւանդակէն փառ ինչաւ Աւադ-
երէցը ծնկան փրայ եկաւ ու ըստ . « Կը
» յանձնեմ ձեղի որ սպանելոցին հոգւոյն ա-
» ղօթք ընէք , ինչպէս որ ինքը փափաքե-
» ցաւ . և իրեն համար Հայր Տէր մը ու
» Ուշոյն մը ըսենք . մէկ Հայր Տէր մը Ու-
» շոյն մալ այն խստասիրտ մեղաւորնե-
» րուն , որ իր մահուանէն բարի պտուղ-
» մը չեն քաղելը » :

Կարծեմ որ ան բազմութենէն շատ քիչ

եղաւ որ սրտերնին չիշարժի ու չփորդձկի :
Ծատիորը ինչ կարգաւ որ եկեր էր, զրե-
մէ նոյն կարգաւը դարձաւ . Եղբայրութիւ-
նը առջև էն , ետքը քահանայք , ետքը զիւ-
նուորները : Բոլոր ճամբան վարդարան ,
Լիմանիա , սաղմնս և որիշ աղօթքներ
ընելով Փելիչէնին հոգւոյն յաւիտենական
հանգստեանը համար , մինչեւ որ հառան
սուրբ Վարկոսայ եկեղեցին : Հոն ամենա-
սուրբ հարորդութեան սեղանին առջին Վ-
ւաղերէցը ետքի արօթքներն ըրաւ ու ժո-
ղովուրդը օրհնեց : ԱՇեկը չիկար , որ հառ-
տատ միտքը դրած չըլար թէ Փելիչէն ար-
դարոյ երանելի հայրենիքը թուիր էր . բայց
քրիստոնէական խոհեմութիւնը կը սպահան-
ջէր , որ իրեն համար աղօթքը ըլլուի , մասն
զի Վստուծոյ դատաստոանը շատ անիբնելի
և ահաւոր է :

Հաւատացելովն ալ եռանդը շատ էր
մատուցանելու այն ամէն նախատը ինչ որ
կընար սլէտք ըլլալ , որակէս զի Փելիչէն
շուտ մը Վստուծոյ քովը երանութեան հա-
նի : Քաւարանի եղբայրները ան բազմու-
թինէն՝ որ ան տիսուր տեսարանէն կը դառ-
նար , առատ ողորմութիւն ժողովեցին , ա-

ուսնձին մարդիկ ալ եղան որ ուրիշ ողոք
մութիւններ ըրին :

Վահապարախն մարմինը նոյն իրիկումոք
կախաղանէն վար առին, ու ինչպէս օրէնքն
որ կը հրամայէ, դահիճը նոյն տեղը թա-
ղեց : « Այն միջոցին դահիճը ձեռքէն առաւ
ան վարդարանն որ մեռնելու առեն հետ
էր առեր . ու եաքը բանատին պահապանին
ցրցնելով ըստ որ « Ան վարդարանը քա-
» նի որ ողջ է՝ վրան պիտի ողաչէ . մա-
» հուընէն ետե իր զաւակացը պիտի յան-
» ձնէ իրու սիրելի ու ջերմեռանդական յիշա-
» տակ մը անոր, որ սրբութեամք մեռաւ
» և թէ ասանէլ դիակուած մինչև ան ատեն
» տեսած չէր, թէ սլէտ աս երեսունուիրեք
» հոգի է որ կախեր եմ, կ'ըսէք » :

Հայց քաղքին տէրութիւնը հրաման
տուաւ որ կէս զիշերուն մեռեն առին ու
հաւարակաց գերեզմաննոյց տարին և ու-
րիշ հաւասարացելոց պէս թաղեցին :

Ով Փէլիչէ, հոգիդ յաւիտենական
խաղաղութիւնը վայելէ, որ կենացդ ետքի
օրերը այնսպիսի ասկաշնարութեան ու աս-
տուածակաշտութեան օրինակ տավիր . ու-
րույանցանքովդ տուած դայթակղութեա-

նը աւելօք դեղն ըրիթ արցունքին ու սուրբ
մահուանդ բարի օրինակով։ Ուրախ կե-
յիր յուսովն որ օր մը սիտի գայ որ քու
հաւատքին պարգևն ալ սիտի ընդունիս
մարմնոյդ յարութեամբը, զորն որ ուզեցիր
որ նախատանայ ու ցաւոց տեսարան մը բլ-
լայ, սրպէս զի արդարութեան ու փրկու-
թեան զործիք դառնայ։

Ա.Ա

ՊՈ.ՏՄՈՒԹԵԱՆՍ ՄԵԶ

ՅԻՇԱԽԱԾ ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐԸ

ՄՏԱԾԱԽՈՒԹԻՒՆ Ա.

Յիսուս պարտէզին մէջ :

« Եշաւասիկ Հիսուս, որ իր սուրբ մար
» մինը և արինը զատկական գառին հրա
» շալի սեղանին վրայ տուաւ իր սիրելեացը
» որ ուտեն, ու հետն առաւ Գելմսեմանի
» տարաւ զիրենք : Իր աշակերտներուն հետ
» սովորական պարտէզը մտաւ, ու ըստ որ
» հոննստին, մինչեւ որ ինքը երթայ աղօմք
» ընէ : Տասուերկու առաքելոց ընտիր խում
» բէն իրեք աւելի հաւատարիմներն ըն
» տրեց, ու հետն առաւ սպարտէզին ներախ
» կողմերը դնաց, որպէս զի իրեն քաշած
» չարչարանքը աչքով տեսնան . և հրամայ
» եց անոնց որ հոն հետը արթուն կենան .

» և անոնց սիրտ տալու համար՝ որ աս
» սպատիկ նեղութմեր համբերեն, յայտնեց ա
» նոնց իր քաշած նեղութմիները որ իրենց քա
» շածեն անհամեմատ աւելի էր : « Տրտում
» է անձն իմ մինչև 'ի մահ » : Ենոնցմէ
» ալ հեռայաւ, ու քարի նետուածք մը
» առաջ երթալով, ծնկան վրայ գալու տե
» զը գետինն ինկաւ, երեսը հողուն վրայ,
» ու անանկ զետնւատարած կը մոտածէր ու
» աղօթք կ'ընէր : Ետքը իրեն իրեք աշկերտ
» ները հոգալով, անոնց քովը դնաց, ու
» տեսաւ որ քուն կ'ը լսային . դրդեց վիրենք
» ու անուշութեամբ մը յանդիմանեց, որ
» հետը չեխն կրցեր արթուն կենալ ու ա
» ղօթք ընել : « Նորէն իր աղօթքին դարձաւ,
» ժամ՝ մ'ալ մոտածական ըրաւ . նորէն աշ
» կերտներուն դարձաւ, ու տեսաւ որ քու
» նը նորէն յաղթեր էր անոնց . բաղմա
» դութ վարդաղետը մարդկային տկարու
» թեանը կարեկից եղաւ . թողուց որ քուն
» ը լսան, ինքը նորէն շատ նեղութիւն քա
» շեղով դարձաւ որ աղօթք ընէ : Ո՞վ Փէ
» լիչէ, լուսնին լուսովը այն աստուածային
» դէմքին վրայ տես վախը, ու հոգւոյն
» տաղնասպր ու ցար . տես որ տիսուր Ճա

» կատէն առաստ արիւն կը կաթէ , որ լու
» գեստները ու գետինը կը թրջէ . բայց ին
» չէն է . Քիառուսի պարտէվին մէջ աս ան
» հաւատալի շարչարանքը : Պատճառը
» շատ է . բայց ամենէն դլսաւորն էր իր
» շարչարանքը , մարդիկներուն անօրէնու
» թիւնը , ու անոնց հետևանքը » :

« Քիառուս չմողուց իր մարդկային բնու
» թեանը որ վայելէ այն անպատմելի երա
» նական զուարձութիւնները , որ աստուա
» ծային բնութեանը հետ միանալով կրնար
» վայելի : — Քիառուս իր մարդկութիւնը
» բոլորովին ցաւոց բռնութեանը տակը
» ձգեց , որ ամենափափուկ էր ամենակա
» տարեալ ըլլալուն պատճառաւը . — մը
» տածեց ու առաջուց տեսաւ աւաղակնե
» րը — զինուորները — դատաւորները —
» թշնամեացը անդգամ՝ ծիծաղը — իր սի
» րեղեացը ցաւը — նախատիմները — զար
» նուածքները — նեղութիւնները — խո
» ցուածները — անարգութիւնները , չար
» չարանքը , արիւնը , վիշտը , ու մահը զո
» րոնք ամենը քիչ ատենէն սլիտի քաշէր :

« Աւ աս ամէն բան առաջուց այնպէս սաս
» տիկ իմացաւ , որ ներսէն զգաց ու ճըշ-

» մարտապէս կրեց բօլոր չարչարանքը , ա
» նաև որ սոսկացաւ , նուաղեցաւ , և այն
» նեղութիւնը զինքը կը մեռյնէր , [թէ] որ
» երկինքէն հրեշտակ մը չինջնար ու չիւ
» սուսի մարդկային բնութիւնը իր գեղւ
» բնական գօրութեամբը չգօրացնէր : Ուստի
» կրնանք ըսել թէ Հիառւս երկու անդամ
» մեռաւ , նախ սլարտէվը , ետքը լեռանը
» վրայ և :

« Ավարձնէք թէ Հիառւս իր քաշելու
» չարչարանացը մխիթարութիւնն մը կրցաւ
» ունինալ մտածելով մարդիկներու փրկու
» թիւնը , որ իր չարչարանքովը պիտի բնէր .
» մասն վի ան ատենը չարչարուիլ ուզե
» լուն , միտքը աս բանիս չէր իտար : Բայց
» ինչպէս կրնար մարդիկներու փրկութիւնը
» միտքը բերել առանց միտքը գալու այն
» չափ յիմարներու ու ալերախսներու բար
» մութիւնն ալ , որ 'ի մերայ այսր ամենայնի
» պիտի կորսուելին : Իր աստուածայինն սիւ
» ըովլ լցուած զութը այն խեղճ արարածոց
» վրայ արդեօք ինչպէս սոսկալի ցաւ դգաց
» անոնց յաւիտենական տանջանացը վրայ :
« Հիառւս ինչպէս իր զգայուն բնութեր
» ծածուկ բաժակաւը համեն առաւ այն ա

» մենային վշտաց ու տանջանայլ որ իր սի
» ըելիքը աշխարհքիս վրայ կամ քաւարանի
» մէջ սկիտի քաշելին : Համեմատելու ըլ-
» լանք՝ ոչ ինչ է հարսի մը ցաւը իր փե
» սային վրայ , ոչ ինչ է մօրը ցաւը իր որ
» դւոյն վրայ , ոչ ինչ է թէ որ ամէն հարսի
» ու ամէն մօր սրախ ցաւերը ժողվելու մէկ
» ընելու ըլլանք : Ո՞չ ինչպէս իրաւցրնէ
» դառն էր իմ Հիսուսիս բաժակը , վասն
» զի այնչափ ցաւերով ու այնչափ ապի
» բախտութեամբ ցելուած էր . ու աւելի
» դաժան դիրտն այն էր , որ աս բաժակը
» գլխաւորապէս այն ժողովուրդը տուա-
» քեզի , տէր իմ Հիսուս , որ դուն ամէն
» բանէ վեր աչքիդ բիրին պէս ու սիրելի
» զաւկի , մը պէս սիրեցիր . անանկ որ
» դուն որ ամենահամբերող ես՝ չիկրցար
» իրեք անդամ չիխնդրել Հօրմեդ , որ ան
» բաժակը քեզմէ հեռացընէ . թէպէտ և
» իրեք անդամ աս ալ աւելցուցիր , որ չէ
» թէ քու կամքդ , հասկա թող իրեն կամ
» քը կատարուի : Ո՞չ , ես ալ ան բաժակին
» մէջը ապերախտութեան ամենադառն կա-
» թիլը կաթեցուցեր եմ : Ուրիմն զզուինք
» աս ապերախտութենէն , ու պատիժը սի

» լով յանձն առնունք . ու որչափի խիստ
» ու երկխողաղի ըլլայ , արխութեամբ մեր
» վարդապետին հետ լունք . Հայր , եղացին
» կամքք քո » :

ՄՏԱՃԱՌԵԹԻՒՆ Բ .

Յիսոս Նորայ ՚ի Գողցորա :

« Տես , ով հօգի իմ , որ քու Փրկիչը
» հոռմայեցի դատաւորին ատեանէն եղաւ ,
» չորս դին անգութ դաշիճներ , ու ինքը
» իր սպանութեան գործիքը կո՞նակը կը
» քաշկրտէ երկու առապակի մ.ջ , որ ի-
» րեն չարչարանաց ընկեր տուին : Տես որ
» ապերախտ քաղքին աւելի մեծ ճամբա-
» ներէն կ'երժմայ , ևուեն առջևեն , աջ
» կողմէն ձախ կողմէն կատաղի խումբ մը
» ձիաւորաց ու հետեակաց , ու աշխարհ-
» քիս ամէն կողմէն հոն թափած բազմու-
» թիւն . կան որ կը զարմանան , կան որ կը
» ցաւին , կան որ հետաքրքրութեամբ կը
» նային . ու իր չարտափառ մշնալիները

» անողորմամբարիշտ ուրախութիւննին չեն
» կրնար ծածկել : Յիառւս այնչափ քաշած
» չարչարանացը պատճառաւ տկար ու կի-
» սամեռ , խաչին ծանրութեանը տակ ին-
» կաւ մէկ երկու անդամ . իակ դահիճնե-
» րը որակէս զի ողջ վիճակը խաչ հանեն , ըլո-
» նութեամբ Ախմոն կիւրենացիին կռնակը
» տուին խաչը : Քիչ մ'ալ որ առաջ գը-
» նաց , մօրը , սիրելի աշակերտին և ու-
» րիշ բարեպաշտ կանանց հանդիպեցաւ ,
» որ այնչափ ցաւով լցուած էին , որ կրո-
» նային լալ , բայց չէին կրնար խօսել : Յիւ
» սուս մարդարէութեամբ խօսելով գիտ-
» թեամբ մը լսաւ իրենց՝ որ ան արցունքը
» չէ թէ իրեն համար , հապա իրենց ու ի-
» րենց զաւկլներուն համար թափեն . դու-
» ցէ կարենան մարել աստուածային բար-
» կութեան բորբոքած բոցը , որով քիչ ա-
» տենէն ձրէից աղպը՝ որ պատմի ժամա-
» նակինին հասեր էր՝ պիտի տանջուէին » :

« Ես խօսքիրը յայտնի կը ցուցինեն , թէ-

» Յիսուսի մարմնոյն սաստիկ չարչարանքը
» հոգւոյն առ մարդիկ ունեցած մէրը պակ-
» սեցուցած չէր : Հասպ ի՞նչ կ'րանմ թէ-

» պակսեցուցած առաջանակութեամբ թէ նախա-

» տիմկը , հարուածք , տանջանկը , մեղլէ հա
» մոր չարչարանկը քաշելու բաղձանկը ա
» և ելի կրորբոքէին , աւելի կը փափաքէր
» որ դոհը կատարեալ նուիրէ : ԱՅ , ով
» կընար Քյառուսի սիրտը տեսնալ ան Ճամ
» բուն լիսայ . ի՞նչպէս մարդիկներու բա
» բոյն համար կը նուիրէր ի՞նչ որ մար
» դիկներէն կը քաշէր . ի՞նչպէս մեղլի ո
» դորմած ըլլալու փափաքը իրեն դէմ զին
» քը անգութ կ'ընէր » :

« Ո՞վ Ֆիելիչէ , ահա քեղի օրինակ մի
» որոն ; նմանելու հնար չիկայ , և զոր քու
» աստուածային վարդապետք քեղի կու
» տայ մահուան երթալու Ճամբուդ : Տա
» բակոյս չիկայ որ դու Քյառուսէն շատ
» պակաս ցաւ ու արհամարհանկ սիստի
» քաշես : Քու երկու քովդ չէ թէ երկու
» աւագակ , հապա երկու քահանայք Աս
» տուծոյ . դու չէ թէ նախատեալ , հապա
» քու դահիճներդ ալ քեղի կարեկից . քեղ
» բազմութիւնը չարագործ չիսեպեր , հա
» պա ասպաշխարոդ : Բայց թէ որ ամէն
» բան սրտանց երինաւոր Հօրն լինծայես
» վաստանունութիւնը , չուանները , սպան
» նուելու երթալը , ի՞նչ մեծ վարձք չես
» անենար արքայութիւնը » :

ՄՏԱԾՈՒԹԻՒՆ Գ.

Յիսուս Խաչեալ :

« Ո՞վ հոգի իմ՝ յիշէ ան ցաւագին թաւ
» վորն որ Յիսուս Գողգոթայ տարին, ու
» բուն վրայ որ աս առաւօտ մտածական
» լրինք : Տես որ ինչպէս լեռն որ հասան
» հոռմայեցի զինուորները ան տեղն որ
» պիտի Յիսուս Խաչ ելլար չորս դին ա
» ոին . որպէս զի աս սոսկալի տեսարանը
» տեսնելու համար եկող բազմութիւնը հոն
» չիեցուի : Տես որ հոն տեղը դահիճնե
» րը թեեղնին սովորած, բնութեամբ կա
» տաղի, բայց սովորութեամբ ալ եւել, Յի
» սուսին հագուստները ինչպէս վրայէն
» կը քաշեն կը հանեն, և այն ամենասուրը
» մարմինը կ'երևնայ արունդուայ ու լիրա
» լից : ՎՇ, որչափ ամօթխածութեան կրա
» կուլ չարչարուեցաւ կուսանաց ամենա
» մաքուր թագաւորի՝ տեսնալով որ մերկ
» է : Եսոքը, ըլլայ թէ խաչին վրայ որ
» քամեն ցաւը շուտ մի զինքը սպաննել ,
» զմռսով խառնած դինի խմցուցին, բայց

» լեղի ալ խառնած որ դժութեան մէջ ալ
» անդութ ըլլանին ցուցընեն : Կրնաս հի-
» մակ մտածել ջերմեռանդութեամբ՝ որ
» դահիճներուն մէկ ակնարկութեամբը
» գրիեց ու պազաւ խաչը ու ինքիրեն վրան
» տարածուեցաւ : « Խահիճները աջ դին ,
» ձախ դին , ոտքին ծուեցան . ոմանք ա-
» փերը բռնած կը բանացին , ոմանք ո-
» տուլները կը քաշկլուտեին , ոմանք ձե-
» ուուրնին դամ և ուռ , այն երկրագելի
» ձեռուլներն ու ոտուլները կը պատուին ,
» ու կը միրաւորէին , ու խաչին վրայ կը
» դամին : Աստուծոյ գառին արիւնը տաք
» տաք դահիճներուն երեսը կը ցաթկիէր :
» Ա եր վերուցին , փոսին մէջը տնկեցին ,
» որպէս զի խաչին վրայ շարչարուի ու
» մեռնի : Աս ողօրմնուկ տիսարանիր աւելի
» ցաւագին լրաւ սուրբ Աստուածածնայ
» խաչին տակը դանուիլը . հոն կեցեր էր
» սուրբ Աստուածածին մեծ ու անձառելի
» առաքինութեամբը երբոր իր գաւակը Խ-
» սահակ Աստուծոյ զոհեց , մէկ շուրբ ու
» օրինակը եղաւ » :

» Տայս Հիսուս ստ խաչին վրայէն այն

» Հափ մեր արցունքը կ'ուզէր , որչափ որ
» մեր սրտին դարձը կ'ուզէ : Կը տեսնայ
» որ սրտելնիս կապուած են անառակու
» թեան , ագահութեան ու հպարտութեան
» մահաբեր կապերովը . ուստի աս կապերը
» ջարդելու ու մեր հոգին աղատելու հա
» մար , խաչեն ինք իր վրայ կը ցուցընէ
» սաստիկ ցաւ , աղքատութիւն ու խոնար
» հութիւն : Բայց ան կապերը ջարդելու
» համար պէտք է որ մենք փափաքինք ,
» մենք գործակից ըլլանք : Ուրեմն , ով
» Փէշիչէ , տես որ ինչպէս չարչարանքը
» հաստատ կամք ունեցօղներուն թագաւո
» րական ճամբայ է կատարելութեան ու
» փրկութեան համնելու : Ուրեմն դու ալ
» քու չարչարանքէդ սիրտ առ , շնորհա
» կալ եղիք Աստոծոյ , ու սիրով ընդու
» նէ , ու միաբդ բեր որ Յիառափինմանիս » :

որ կույզը ուժութիւնի որբացու ուժն պահ
ՄՏԱԾՈՒԹԻՒՆ Գ .

առաջատար ու ճակատագործ ուժն պահ

Յիսուս Խօսի կ խաչին :

« Ո՞վ հոդի իմ, երեակայութեանդ առ
» ջեր բեր Կողղովայի ցաւադին տեսա
» բանը, ուր որ երեկ իրիկուան մնածա
» կանին մէջ քու Փրկիչդ խաչին վրայ թո
» ղուցիր : — Ես որ ինչորէս չարասիրտ
» քահանաները, ու կոյր բազմութիւնը,
» գոհչ շրլալով Հիսուսի քաշած անողորմ
» տանջանքներովը, սիրան ալ կը խոցին
» անդգամութեամբ զինքը ծաղը լնելով .
» Դուն չես մի, որ Աստուծոյ տաճարի
» կը կործանես, ու իրեք օրուան մէջ նո
» րեն կը շննես : Ինչու դուն գքեղ չես ա
» զատեր . ու թէ որ Աստուծոյ որդին ես,
» ինչու խաչեն վար չես իջնար որ քեզի
» հաւտանիք : Տեսէք ան որ ուրիշները ա
» զատեց զինքը չիկրնար աղատել : — Հի
» սուս այն անգութ ու բարբարոսական ա
» զաղակներուն ատենիր, ողորմուկ մը աշքը
» դէպ'ի երկինք դարձուց ու բառ . Հայր,
» թողութիւն տուք սրտնց . վասն զի ինչ

» որ կ'ընեն չեն զիտեր : — ԱՅ , ի՞նչ
» խօսք է աս խօսքը միայն բաւական է ցու
» ցընելու համար թէ Աստուծոյ որդի ևս :
» Բայց դու , ով ամենաքաղցր տէր , չէ
» թէ միայն հոն եղաղ չըէլոյմէ իրենց ան
» իրաւութեանը վիմէժը շատիր , հասա
» ետքէն եկու ամեն մնալա ւորներէն ալ :
» Ու ինչպէս որ ան ատենը աս աղօթքը
» Հայրն Աստուծած շատերուն համար լին
» դունեցաւ , որ քիչ մը ատենին կուրծքեր
» նին զարնելով ու քեզ Որդի Աստուծոյ
» խոստովանելով Գրող գոմայէն վար ին
» ջան , նոյն շնորհքը մեզի ալ պարզել ան
» հունդթմթեամբ , որ Հօր Աստուծոյ աջ
» կողմն ալ նատելու ատենդ , մեր ամենուս
» կենդանի բարեխօս ևս : — Բայց ով կըր
» նար կարծել , որ երկու հետու խաչուոլ
» ներէն մէկն ալ , այն անողորմ պատու
» հասին ցաւին ատենն ալ նախատէ Հիւ
» սուս , ու իրեն թշնամեացը հետ միարա
» նի : Բայց մէկալը անանկ չէ . մանաւանդ
» իր ընկերը յանդիմանեց , ու լսաւ , որ
» իրենք արժանի է ին այն տանջանքին ,
» բայց Հիւսուս արդար ու անսեղ էր . ու
» ետքը Հիւսուսին դարձաւ ու լսաւ . Տէր ,

» յիշէ զլա, երբոր արքայութեամբով դարս
» ըլլաս : — Խակ Յիսուս . Խրատ կ'ըսնմ
» քեզի որ այսօր ինձի հետ արքայութիւնը
» կ'ըլլաս : — Ո՛վ Ֆէլիչէ , ինչպիսի քաղ.
» ցրր ու կենդանի յոյս կուտայ մեզի Յի-
» սուսի ասանկ խաչէն աւազակլը երկինք
» հրատիրելը . թէսլէտ անոր արդիւնքը աս
» էր միայն . քանի մը ժամ կենդանի հա-
» ւատք , ու անկեղծ ու խոնարչ ապաշխա-
» րութիւն : Ո՛հ , Ֆէլիչէ , մենք ալ Յի-
» սուսին դառնանք , որուն խաչելեալ պատ-
» կերը դիմացնիս կեցեր է , ու մեծ հաւատ-
» քով ու խոնարհութեամբ աղաջնիք իրեն ,
» որ իր երանելի թագաւորութեանը մէջ
» մեզ ալ յիշէ , որ որ փառօք Հօր Ար-
» տուծոյ աջ կտղմբ նստեր է , ու իր ա-
» նուանք փառացը համար երանելի Յախ-
» մասին ըրած ողորմութիւնը մեր վրայ տլ
» ցուցմնէ : ՞ :

— 423 80 0404 —



